

Խօջայ Խաչիկ կը մեռնէր Հին Զուղայի բռնադատութիւնն առաջ: Շահ Արաս Ա. ի ի պատիւ իր կատարած շքեղ ընդունելութիւնը, մեծարժէք ընծաները, բռնազաղթէն չփրկեցին նոյնիսկ իր գերդաստանը: Առաքել Դաւրիժեցի, որ անհաշտ եւ բուռն հակակրանք ունի Շահ Արասի դէմ, կը խորհի որ Խօջայ Խաչիկին արքայաւայել ընդունելութիւնը պատճառ եղած ըլլայ բռնազաղթին: Շահ Արաս, կ'ըսէ, «Իրբեւ տեսնէր զայնքան հարստութիւն եւ զբարեկալելչութիւն քրիստոնէից՝ մախայր, եւ զգայոէր ի սրտի՝ թէ զիարզ պատճառ եւ ժամ դոտցէ նենգել զնոսա»⁶: Շահ Արաս, անտարակոյս, ոչ հին Զուղայեցոց դէմ «նենգել» կը խորհէր, եւ ոչ ալ անոնց ունեցած հարստութեան տիրանալ: Իր նպատակը, ինչպէս կը յայտնուի բռնազաղթի ընթացքին եւ անկէ ետք, օգտուել էր Հայոց բնածին առեւտրական ընդունակութենէն, որմէ արդէն Պարսկաստան մեծապէս կ'օգտուէր՝ Սաֆաւեաններու շրջանին: Պարսիկ արքաներու հետ հայ առեւտրականներուն համերաշխ գործակցութիւնն էր՝ որ այդ շրջանին բարգաւաճ վիճակի մը հասցուց Պարսկաստանի տնտեսական կեանքը եւ երկիրը ոսկիով լեցուց, մինչ Պարսկաստանի մէջ ոսկեհանք չկար: Շահ Արաս Մեծ քայլ մը աւելի առաջ գնաց իր նախորդներէն. չգոհացաւ լոկ ոսկի հաւկիթով, որոշեց տէր ըլլալ ատիկա ածող սագին ալ:

Ինչպէս Հին Զուղայի մէջ, նոյնպէս Նոր Զուղայի մէջ ալ՝ Խօջայ Խաչիկի գերդաստանը ամէնէն առաջնակարգ դիրքը գրաւեց: Խօջայ Խաչիկի երէց որդին՝ Խօջայ Սաֆար, անտարակոյս, ձեռք առաւ գերդաստանին կառավարութիւնը՝ հօր մահէն ետք, Հին Զուղայի մէջ, եւ անշուշտ ինքն էր որ ընտանիքը առաջնորդեց Սպահան, հաստատուելու համար Նոր Զուղայ:

ԽՕՁԱՅ ՍԱՖԱՐ

Խօջայ Սաֆար՝ երէց որդին էր Խօջայ Խաչիկին: Զարմանալիօրէն, շատ քիչ բան գիտենք իր կեանքին ու գործունէութեան մասին: Ըստ իր տապանագրին, 55 տարեկան էր երբ վախճանեցաւ, 1618ին. ուրեմն, Խօջայ Սաֆար ծնած ըլլալու է 1563ին, Հին Զուղայ⁷: Ինք ըլլալու է Խօջայ Սաֆար Զուղայեցին, որ կը յիշուի 1611ին՝ Երուսաղէմի վանքին պարտքը վճարողներու կարգին⁸:

6. ԱՌ. ԴԱԻԻԺԵՑԻ, Պտմ. էջ 25:

7. ՅԱՐՈՒԹԻՒՆ Թ. ՏԵՂ ԶՈՎԱՆԵԱՆՆՅ, Պատմութիւմ Նոր Զուղայի որ յԱպա-
հան, Ա. հտ. տպ. Նոր Զուղա, 1880, էջ 88-89:

8. ՍԱԻԱՆԵԱՆՆՅ, Պտմ. Երուսաղէմի, 1931, Երուսաղէմ, Բ. հտ. էջ 569: Տե՛ս նաեւ ՆՈՐԱՅՐ ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր Յուցակ Զեռագրաց Սրբոց Յակոբեանց, Գ. հատոր, Երուսաղէմ 1954, էջ 194, սիւնակ Բ. (Զեռագիր թ. 322, Պատմ. Պարոնէր Գրիգորի):